† ԱՆՏՈՆ ՉԵԽՈՎ

Ռուս արդի գրականութիւնը մի դդալի կորուստ ունեցաւ։ Ծաղկած տաղանդի մէջ անժամանակ վախճանուեց ռուս ժողովրդի սիրելի գրագէտներից մէկը՝ Ա. Չեխովը։

Անտոն Պաւլ. Չեխովը ծնուել էր 1860 թուի յունուարի 17-ին Տագանրօկ քաղաքում. տեղական գիմնազիայում աւարտելով իւր ուսումը, մտաւ Մոսկուայի համալսարանի բժշկական ֆակուլտէտը, ուր և աւարտեց։

Չեխովն սկսեց գրել տակաւին ուսանող ժամանակից. 1872 թուի յունուարին նա գրեց իւր առաջին ծաղրական վէպիկը Պ. Բուրգի գաւեշտական թերթերից մէկում, որին հետևեց մի շարք պատկերներ, որտեղից և սկսաւ յայտնի լինել նորա անունը։ Գրական աշխատութեան առաջին օրերում ապագայ յայտնի զրողը զբաղւում էր և լրագրական յօդուածներ գրելով։ Բայց շուտով նա զդաց իւր կոչումը և սկսեց նուիրուել գեղեցիկ գրականութեան։

Տարիներ շարունակ Չեխովի վէպերն ու պատկերները տպւում էին «Нов. Вр.»-ի ֆէլիէտոնում, մինչև նորա հեռանալն այդ թերթից։ Այնուհետև նորա երկասիրութիւնները հետզհետէ աւելի լրջութիւն ստանալով, տպւում էին առաւելապէս «Русс. Мысль»-ի մէջ, որի խմբագրի հետ սերտ յարաբերութեան մէջ էր և ուր մի տարի առաջ՝ գեղարուեստական բաժնի խմբագրի պաշտօն էր ստացել։ Անցեալ տարի Չեխովի երկերը լոյս տեսան ահագին քանակութեամբ առանձին գրքերով։

Նորա թատերական գրուածները հետզհետէ ներկայացուեցան ռուս բեմի վերայ, որով նա հռչակուեցաւ նաև իբրև բեմական գրող։

Չեխովի բոլոր գրուածները թարգմանուած են օտար լեզուներով, ինչպէս նաև հայերէն. միմիայն «Լուսայի» էջերում հրատարակուած են նորա 7 վէպիկներ՝ 1. Գրաչ, 2. Դրամա, 3. Զարհուրելի գիշեր, 4. Իշխանուհի, 5. Փոխանորդը, 6. Առանց վերնագրի և 7. Խնդեր

ՕՐ. ԱԼԻՍ ՍՏՈՆ ԲԼԱԿՈՒԷԼԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿ

Արտասահմանի թերթերից տեղեկանում ենք, որ տարւոյս մայիսի 30-ին Ամերիկայի Բոստոն քաղաքում հայ հասարակութեան նախաձեռնութեամբ կատարուել է «Լուսայ»-ի ընթերցողներին լաւ ծանօթ ամերիկայի օրիորդ Ալիս Ստոն Բլակուէլի հայագիտական գործունէութեան տասնամեայ յօբելեանը Ամերիկայի Հայոց առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Սառա-